


Գ Ե Վ Ո Ր Գ Զ Ա Հ Ո Ւ Կ Յ Ա Ն (70 տարի)



Հողվածիս վերնագիր դնելու մտորումներում համոզվեցի, որ հայ լեզվաբանությանը և ընդհանրապես հայագիտությանը քիչ թե շատ ծանոթ մարդու համար այսօր ավելի բովանդակալից բառակապակցություն, քան Գևորգ Ջահուկյան անուն ազգանունն է, չէլա:

Ընդունված է ասել՝ բանաստեղծ ծնվում են, գիտնական՝ դառնում: Բայց բոլոր մեծերի, այդ թվում Գ. Ջահուկյանի կյանքի օրինակով անվարան կարելի է ասել՝ ամեն իսկական արհեստ ու արվեստ, շնորհք ու մտավոր կարողություն աստվածային է: Սովորական մարդկանց ստեղծագործական կյանքի պատմությունն սկսվում է նրանց աշխատանքային գործունեությունից, բացառիկներինը՝ ուսումնասիրությունից: Բնությունը տրվածը իր մեջ չմեղցնելու, համառ աշխատանքով առաջ գնալու վարքագիծը նույնպես բնատուր հատկանիշ է, որ քչերին է յուրահատուկ: Ուստի պատահական չէ, որ սկսած դպրոցական տարիներից (1928—1935 թթ.) Ստեփանա-

վանի աշխատանքային դպրոց, ապա՝ Երեվանի Ստ. Ծահուկյանի անվան միջնակարգ դպրոց), այնուհետև համալսարանական ուսումնասիրությամբ (1937—42 թթ.) մինչև ասպիրանտական քննությունների տարիները, բոլոր ամփոփագրերում և կրթության փաստաթղթերում Գևորգ Ջահուկյանի անվան դիմաց կա միայն մեկ գնահատական՝ «գերազանց»:

Բազմաշնորհ մարդկանցից շատերը նույնիսկ հասուն տարիքում մասնագիտական կողմնորոշման փնտրտուքի մեջ են լինում: Բայց մեզ թվում է, թե նախկին Ստեփանավանի շրջանի Ծահուկյանը (այժմ՝ Կալինինոյի շրջանի Մեծավան) գյուղում ծնված ապագա գիտնականը այդպիսի որոնումներ չի ունեցել: Դժվար է ասել, թե Ջահուկյանը ըստեղծագործական ու մտավոր աշխատանքի ուրիշ ի՞նչ ասպարեզում անվանի չէր լինի. բայց մի բան աներկբա է՝ Գևորգ Ջահուկյանը ծնվել էր լեզվաբան դասնալու համար: Բնությունից կանխորոշված այդ ընտրությունն էլ նրան դարձրեց նույն նախախնամությամբ աշխարհահռչակ լեզվաբան դարձած Հրաչյա Աճառյանի ասպիրանտը (1942 թ.)՝ ընդհանուր լեզվաբանություն մասնագիտությամբ: Պատենությունն, որից Գ. Ջահուկյանը դժգոհելու ոչ մի առիթ չունեցավ:

Ասպիրանտական տարիներին նա արդեն տիրապետում էր հին դասական և նոր եվրոպական ու ասիական մի շարք լեզուների, որոնց ցանկը հետագայում գնալով ընդարձակվեց՝ ընդգրկելով փոքրասիական մեռած և հնդեվրոպական ու կովկասյան ժամանակակից այլ լեզուներ: Լեզուների իմացության մեջ Գ. Ջահուկյանը իր մեծանուն ուսուցչի իսկական աշակերտը եղավ: Ասում են՝ վատ է այն աշակերտը, որը չի ձգտում գերազանցել իր ուսուցչին: Հրաչյա Աճառյան գիտնական ուսուցչի պարագային սա հավոր պատշաճի ասված խոսք է միայն, Գ. Ջահուկյան գիտնական աշակերտի պարագային՝ կյանքի փորձով հավաստված իրական դատողություն: Հայրենական պատերազմը ընդհատեց Գ. Ջահուկյանի ուսման ընթացքը: Դեռևս ասպիրանտության առաջին տարում նա զուգահեռաբար պաշտոնավարում էր Քսենոնի ման-

կական քաղաքում, որպես դպրոցի դիրեկտոր, ապա 1942—43 թթ. ծառայում էր խորհրդային քանակում, 1943—44 ուստարում աշխատում Ախտայի դպրոցում; որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1944 թ.-ից շարունակում է ասպիրանտական ուսումնառությունը, 1947 թ. պաշտպանում թեկնածուական, 1955 թ.՝ դոկտորական դիսերտացիա: Հաջորդ կոչումներն ու տիտղոսները երկար սպասել չեն տալիս ստեղծագործական կարողություններով ու բեղմնավորությամբ շրջապատից որոշակիորեն առանձնացող լեզվաբանին: 1958 թ. Գ. Զահուկյանին շնորհվում է պրոֆեսորի, 1965 թ.՝ հանրապետության գիտության վաստակավոր գործչի կոչում: 1968 թ. նա ընտրվում է ԳԱ թղթակից անդամ, իսկ 1974 թ.՝ իսկական անդամ:

Ակաժ 1945—46 ուստարուց, ավելի քան 45 տարի Գ. Զահուկյանը դասախոսում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում: Դասախոսել է նաև Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտում: Տարբեր ժամանակներում դասավանդել է ընդհանուր լեզվաբանություն, ժամանակակից հայոց լեզվի տեսություն, հնդեվրոպական լեզուների համեմատական քերականություն, հին հույներեն, լատիներեն: Երկար տարիներ ղեկավարել է համալսարանի օտար լեզուների ամբիոնը: Հիմնադրել և ղեկավարել է ռոմանագերմանական բանասիրության ամբիոնը: Հայաստանի և արտասահմանյան մի շարք երկրների մի քանի տասնյակ քաղաքացիներ Գ. Զահուկյանի ղեկավարությամբ, անցնելով ասպիրանտական դասընթաց, դարձել են հայագիտության տարբեր բնագավառների մասնագետներ: Ծուրջ 30 տարի է, որ նա ղեկավարում է ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի աշխատանքները: Լեզվի ինստիտուտի՝ այդ տարիներին հայերենագիտության մեջ ձեռք բերած նվաճումները, որոնք այնքան ակնառու են, կապված են Գ. Զահուկյանի անվան հետ: Այդ տարիներին Զահուկյանը նաև է ԼԽՍՀ Միմիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի գիտական աշխատանքների գծով փոխնախագահ է, հայերենի նորմավորման ու տերմինաշինության ակտիվ մասնակիցն ու ղեկավարը: Նա՝ վերջին 3—4 տասնամյակներին հայոց լեզվի դպրոցական և բուհերի հայերենագիտական բոլոր ծրագրերի ու դասագրքերի ստեղծման աշխատանքների ակտիվ մասնակիցը կամ անմիջական ղեկավարն է, Հայոց լեզվի (ոճաբանության) դպրոցական դասագրքի հեղինակներից մեկը: Անդամ է մեր հանրապետության, Միության մեջ և արտասահմանում յույս տեսնող մի շարք հանդեսների խմբագրական խորհուրդների, մի քանի գիտխորհուրդների, Ամերիկայի և Եվրոպայի լեզվաբանական ընկերությունների:

Այսքան զբաղվածությամբ հանդերձ թե ինչպե՛ս է հասցրել Զահուկյանը ստեղծել իր գիտական վիթխարի ժառանգությունը, որի մասին իմ գնահատանքի խոսքը ես վարանում եմ սկսել, դժվար է պատկերացնել:

Հեշտ է ասել՝ Գևորգ Զահուկյանը մեծահամբավ հայագետ է, հայագիտական տեղական ու համաշխարհային բոլոր գիտածոողների կազմակերպիչ-ղեկավարներից մեկը, դրանցում վարվող գիտական ասուլիսի կենտրոնական ղեմը, դասական հայագիտությունը կատարելագործող լեզվաբան, լեզվի ուսումնասիրության նոր մեթոդների ու գաղափարների հիմնադիր, հայագիտական նոր տեսությունների ու առարկաների, բազմաթիվ հիմնարար ու ամփոփիչ աշխատությունների հեղինակ և այլն, և այլն: Այս ամենը, սակայն, փաստարկել ու հիմնավորել է պետք, ինչպես փաստարկված ու հիմնավորված զբրում է ինքը՝ Զահուկյանը: Իսկ դրա համար Զահուկյանի լայնամասվալ ընդգրկումներին ու մտքի խորությանը հաղորդակից գրիչ է պետք. մի բան, որ, ավա՛ղ, ոչ բոլորիս է տրված:

Գ. Զահուկյանը եթե ոչ հիմնականում, ապա նաև գալիք սերունդների համար գրող գիտնական է, և նրա վաստակի իսկական գնահատանքը եկող սերունդները պետք է տան՝ այդ մասին ամբողջական ուսումնասիրություններ ստեղծելով: Այստամենայնիվ փորձենք անկարելին:

Գևորգ Զահուկյանի ստեղծագործական բեղմնավորության վիճակագրական փաստարկումը պարզապես անհնար է, քանի որ մինչև դուրս կապարտեք ու կհասցնեք լուսաշխարհի հանել ձեր վիճակագրությունը, նա այդ արանքում կտպագրի առնվազն մեկ մեծագրություն և մի քանի հոդված: Զահուկյանը հեղինակ է ավելի քան 3 տասնյակ մեծածավալ մեծագրությունների և բազմաթիվ ընդարձակ ու փոքր հրատարակումների, որոնցից շատերը տպագրված են աշխարհի ոչ մեկ-երկու լեզուներով: Բեղմնավորություն, որ արդյունք է ոչ միայն տաղանդավորության, այլև աշխատանքային խիստ ու անմասխտ ունեցման և անմացորդ նվիրման:

Լեզվաբանի գիտական գործունեության հիմնական բնագավառը հայոց լեզուն և նրա պատմությունն է՝ իր ժամանակատարածքային ամբողջական ընդգրկմամբ:

Նույն ասեմք, որ նրա ուսումնասիրություններին բնորոշ է քննվող նյութի և այդ մասին ստեղծված գրականության, որպես ուսումնասիրվող հիմնահարցի պատմության, լիակատար ընդգրկումը: Հանգամանք, որ լեզվաբանի աշխատություններին տալիս է սկզբնաղբյուրի արժեք: Այսպիսի ամբողջական ուսումնասիրություններ են Գ. Զահուկյանի «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին ու միջնադարյան Հայաստանում» (5—15-րդ դդ., 1954), «Գրա-

քարի քերականության պատմություն» (17—19-րդ դդ., 1974) մեծագործությունները: «Նոր գրական հայերենի քերականության պատմությամբ», որի հրատարակմանը հայ լեզվաբանության գիտակներն սպասում են անհամբեր, հեղինակը մեծարժեք եռագրությամբ կավարտի հայ քերականագիտության պելիքան մեկ ու կես հազարամյակի արգասավոր պատմությունը:

Նկատելի է նաև, որ իր բոլոր ուսումնասիրություններում Գ. Ջահուկյանը, մշակելով և կիրառելով հետազոտության՝ լեզվաբանության ոչ միայն այսօրվա, այլև վաղվա պահանջները բավարարող մեթոդներ, կատարում է ուսումնասիրող նյութի, այդ մասին ըստեղծված լեզվաբանական-քերականագիտական մտքի զարգացման պատմության դասակարգումներ ու շրջանաբաժանումներ, որոնք դառնում են տեսական ուղեցույց նաև հետագա ուսումնասիրողների համար: Ձեռնարկելով հայոց լեզվի ու նրա պատմության ուսումնասիրության հարցերին՝ նա դեռևս 1950-ական թթ. կեսերին հրատարակում է «Հայոց լեզվի պատմության պերիոդիզացիայի հարցերը» (1956) ուսումնասիրությունը, որում մշակում, իսկ «Հայոց լեզվի զարգացման փուլերը» (1964) աշխատասիրությամբ ամբողջացնում է հայոց լեզվի պատմության շրջանաբաժանման իր տեսությունը: Ջուգասեռաբար և հետագայում հրատարակ են գալիս գիտնականի՝ հայոց լեզվի կառուցվածքն ու զարգացումը ներկայացնող մեծագործությունները: Այս շարքի «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» (1959), «Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը» (1967), «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» (1968) և այլ հետազոտությունների մեջ տեսական ամփոփիչ և ընդհանրացնող արժեք ունի «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» (1974) մեծագործությունը: Ի տարբերություն լեզվաբաններից շատ-շատերի, որոնք, դավանելով լեզվաբանական այս կամ այն ուղղության, այլ ուղղություններին անդրադառնում են միայն սրանց թերություններն ու սխալները քննադատելիս, Գ. Ջահուկյանը դիմում է լեզվաբանական ու քերականագիտական տարբեր ուղղությունների (կառուցվածքային, գործառական, կիրառական, տարածքային, հոգեբանական, հանրային, մաթեմատիկական, փոխակերպական, սերող և այլն, և այլն) առաջին հերթին սրանց նորություններն ու նվաճումները օգտագործելու համար: Այս եղանակով է, որ լեզվաբանը սույն «Հայոց լեզվի տեսության հիմունքները» և «Ընդհանուր և հայերեն լեզվաբանություն» (1978) աշխատություններում հասնում է տեսական ակնառու նվաճումների: Լեզվի և խոսքի փոխհարաբերության, լեզվի կառուցվածքի ու համակարգայնության, լեզվական միավորների ու մակարդակների յուրովի ըմբռնումների,

լեզվի արտաքին ու բովանդակային պլանների հստակ տարբերակման և միաժամանակ սրանց միասնության գիտակցման շնորհիվ, ինչպես նաև քննության մեջ փոխակերպական և իր մշակած համադրական մեթոդների կիրառմամբ ու ազատ տեղաշարժերով՝ Գ. Ջահուկյանը կառուցում է լեզվական միավորների բաղադրիչների ճշտորոշ կադապարներ ու քանաձևեր, տալիս ընդհանուր և մասնակի քերականական կարգերի միանգամայն նոր մեկնաբանումներ՝ ամբողջության մեջ ստեղծելով հայերենի հարաբերակցական քերականության իր տեսությունը: Հայերենի նյութի վրա գիտնականի ձեռք բերած այս արդյունքները նրան դուրս են բերում համընդհանուր լեզվաբանական տեսության և համընդհանուր լեզվաբանական կադապարի ըստեղծման լայն ուղի, որպիսի բաղձանքի վերջնական իրագործումը Գ. Ջահուկյանը համարում է «իր կյանքի բուն նպատակը»:

Ծավալուն, խոր ու անպարփակ են գիտնականի՝ լայն առումով հայոց լեզվի պատմության և համեմատական լեզվաբանության նվիրված ուսումնասիրությունները: Ծարունակելով 1950-ական թթ. իր ձեռնարկումները՝ նա 80-ական թթ. զբաղվում է հայերենի և Հայկական լեզվաշխարհի ու հարևան շրջանների հնագույն լեզուների փոխհարաբերությունների հարցերով և տպագրում է մի շարք նոր հարցադրումներ ու գաղափարներ պարունակող մեծագրական ուսումնասիրություններ («Ուրարտերենը և հնդեվրոպական լեզուները», 1968, «Հայասայի լեզուն և նրա առնչությունը հնդեվրոպական լեզուների հետ», 1964, «Հնդեվրոպական, խոտա-ուրարտական և կովկասյան լեզուների փոխհարաբերությունները», 1967, «Ակնարկներ հայերենի նախագրային շրջանի պատմության», 1967, «Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները», 1970), ամսագրային բազմաթիվ հոդվածներ ու հրատարակումներ: Հետագա տասնամյակների համեմատական ուսումնասիրությունները, որոնցում առանձնակի տեղ ունի «Հայերենի համեմատական քերականություն» (1982) մեծագործությունը, իրենց ամփոփում են գտնում «Հայոց լեզվի պատմություն» (նախագրային ժամանակաշրջան, 1987) հիմնարար ուսումնասիրության մեջ:

Սկսած «Ներածության» մեջ հայոց լեզվի պատմության՝ հեղինակի սեփական շրջաբաժանման սրբագրում-ձգրտումներից մինչև օգտագործված հազարամյա բազմալեզու և պատկառագրու գրականության ցանկերը՝ այս աշխատության մեջ ամեն ինչ ծառայեցված է հայերենի ծագման ու ցեղաբանության, նրա կառուցվածքի լեզվական բաղադրիչների որակական գոյացության համակարգային գործընթացի գիտական ու ամենահավաստի շարադրանքին: Այստեղ ամփոփված են ընդհանրացված են այն ամենը, ինչ գիտությանը

հայտնի են հայերենի հնդեվրոպական տարրերի, նրա վաղնջական ու հնագույն շրջանների փոխազդեցությունների ու փոխառությունների վերաբերյալ: Շրջանառության մեջ են դրված հեղինակի լեզվական բազմաթիվ նոր դիտարկումները, տեսական հիմնավոր ու հեռանկարային գաղափարները՝ վերաբերեն դրանք խոսա-ուրարտական լեզվաընտանիքի առանձնացման թե հայերենի և նուտրատիկ լեզուների՝ հայերենին համեմատվող քերականական և բառային միավորների ճշգրտման, ուրարտերենի և հայաերենի որպես հնդեվրոպական լեզուների փաստարկման թե հայասա լեզվի որպես հայերենի նախնական վիճակի ու նրա կառուցվածքի ենթաշերտի հիմնավորման, հնդեվրոպական նախալեզվի տարբերակային կաղապարի ստեղծման թե այլ հարցերի: Իր մենագրությունների շարքում ունենալով համաշխարհային լեզվաբանական մտքի պատմությունը ներկայացնող «Լեզվաբանության պատմություն» երկհատոր աշխատությունը (1960, 1962), որի մասին Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Էմիլ Բենվեդիստը գրել է, թե «այն առաջին իսկ հայացքից ցնցում է կատարած աշխատանքի վիթխարածավալությամբ», Գ. Զահուկյանն այնուամենայնիվ, խոստովանում է, թե «Հայոց լեզվի պատմությունը» իմ բազմամյա հետազոտությունների պակն է»: Գուցե չի սխալվում: Գ. Զահուկյանի ՀԽՍՀ պետական մրցանակի արժանացած «Հայոց լեզվի պատմությունը» հայերենի ծածանն ու ցեղաբանության «Գիրք ծննդոց»-ն է:

Հայերենի պատմության ուսումնասիրությունները ամբողջանում են հեղինակի «Հայ բարբառագիտության ներածություն» (1972) հետազոտությամբ: Միշտ է նկատված, որ Գ. Զահուկյանը, մշակելով և կիրառելով բարբառների դասակարգման բազմահատկանիշ զուգադրական-վիճակագրական սկզբունք, ըստ էության հիմնադրում է նոր գիտակարգ՝ վիճակագրական բարբառագիտություն: Արդյունքում ստացվել է հայերենի բազմաթիվ ու բազմանշյուղ բարբառների մի այնպիսի աստիճանական ու ճյուղավորված դասակարգում, որը, որպես բարբառների պատմական զարգացման արտացոլում, դառնում է պատմական բարբառագիտության ստեղծման տեսական հիմունք:

Գ. Զահուկյանը աշխարհում ճանաչված համեմատաբան է: Նրա լեզվական-համեմատական քննությունների անմիջական արդյունքն են այն բազմաթիվ ստուգաբանությունները, որոնք ամենուրեք ընդունելության և գնահատման են արժանացել: Գիտնականը իր իրագործելի ծրագրերի կարևոր կետերից մեկն էլ «Հայերենի ստուգաբանական բառարանի» ստեղծումն է համարում, որի ավարտը, որքան մեզ հայտնի է, հեռու է:

Խորհրդային շրջանի քաղաքական վերու-

վարումների մեջ ծանր փորձություններ ապրեց նաև հայ լեզվաբանությունը: Ակադեմիկոս Ն. Մառի «Լեզվի նոր ուսմունքի» հայ հետևորդները 1930—40-ական թթ. կատաղի պայքար ծավալեցին դասական հայագիտության դեմ՝ ավանդական քերականագիտությունն ու Մխիթարյան դպրոցի հայագիտությունը հայտարարելով որպես սխալաստիկ, կղերական, իսկ պատմահամեմատական հայագիտությունը՝ բուրժուական վնասակար ուսմունքներ: 1950—70-ական թթ. այդ հին պայքարի անկուսակցական ակտիվիստները, վերականգնվելով, իրենց պայքարի պաքներն ուղղեցին լեզվաբանների երիտասարդ սերնդի դեմ՝ փակելով լեզվաբանական նոր և առաջավոր ուղղությունների ճանապարհը՝ այս անգամ էլ վերջիններս հայտարարելով որպես հակամարքսիստական, բուրժուական լեզվաբանական ուսմունքներ: Այս ծանր ժամանակաշրջաններում, եզակիների հետ, Գ. Զահուկյանին էր վիճակված մի կողմից պաշտպան կանգնելու դասական հայագիտության սկզբունքներին՝ շարունակելով նրա գիտական ավանդույթների զարգացման գործը, իսկ մյուս կողմից՝ ղեկավարելու հայերենագիտության մեջ լեզվաբանական նոր ուղղություններ ներդնելու, այն ժամանակակից համաշխարհային լեզվաբանության մակարդակի բարձրացնելու պայքարը:

Գ. Զահուկյան գիտնականի ստեղծագործական ոգորումները չեն ընդհատվում նաև այսօր: Այժմ էլ նա շարունակում է իր պայքարը ազգային սնասարծության և գավառական սահմանափակվածության դեմ: Զահուկյանը շատ լավ գիտի, որ հայագիտությունը «ազերագիտություն» չէ, և որ հայագիտության ակունքները սկիզբ են առնում մարդու մտավոր զարգացման խանձարուրից և հասնում են 20-րդ դ-ի աշխարհով մեկ սփռված հայագիտական կենտրոնները: Այնպես որ հայագիտությունը հեռու է ամեն կարգի անլուրջ ու զավեշտական մոգոնումներից: Գ. Զահուկյանը հայագիտության լծի ծանրությունը զգացող և այդ լուծը արժանապատվությամբ ու վայել առաջ տանող գիտնական է, հայ լեզվաբանությանը համաշխարհային փառք ու համբավ բերող գիտնական:

Գ. Զահուկյանն այն անհատականություններից է, որոնք սովորեցնում են ոչ միայն իրենց գիտական վաստակով, այլև՝ վարքով: Կարդացած մարդ է, քայլող հանրագիտարան: Անցյալի ու ժամանակակից համաշխարհային ուշադրության արժանի գրող թե արվեստագետ, գիտնական թե քաղաքական գործիչ՝ բոլորը Զահուկյանի կողմից ճանաչված անհատներ են: Զարմանալ կարելի է, թե բազմազարդ գիտնականը ինչպե՞ս է հասցնում այդ ամենքին հաղորդակից լինել: Բարեկիրթ անձնավորություն է թե՛ մտավոր, թե՛ արտաքին վարքագծով: Պարզ է ու հասարակ,

մոլորությունների մեջ անգամ՝ անկեղծ ու անմիջական: Սկզբունքային է ամեն ինչում: Չի սիրում պարծենկոտ տգիտությունը և միամիտ խորամանկությունը: Ատում է քծնանքը: Քծնանքով Ջահուկյանի սիրտը շահելու հույսը տապ անապատում հյուսիսային գովություն ակնկալել է նշանակում: Խուսափում է անպետող բանավեճերից, առավել ևս՝ բանակոչից: Ամեն ինչ, նույնիսկ քննության օրենքները նրա կենցաղում ստորադասված են և ծառայում են գիտական աշխատանքի շահերին: Լեզվի խրճատության օրենքը օրենք է նրա համար նաև կյանքում: Նա հոգատար է այն ամենի նկատմամբ, ինչ ստեղծված է մարդկային աշխատանքով: Վաղուց նյութական դժվարություն չունեցող գիտնականը մի ազնիվ սովորությամբ չգրված թղթի փոքրիկ կտորն անգամ դեռ չի նետում՝ գտնելով դրա օգտագործման տեղը նույնպես: Չի սիրում շքեղություն, արտաքուստ ուշադրություն գրավող ո՛չ կահույք, ո՛չ իր, ո՛չ նույնիսկ զգեստ: Նախընտրում է հագնել գունազարդ հասարակ վերնաշապիկներ: Չի սիրում նյութական մանր-մուճր գործարքներ. խուսափում է ուշադրություն շեղող, միտք զբաղեցնող կենցաղային մանրուքներից: Տալիս է այն, ինչ տալիս է անվերադարձ. ինչ պիտի վերադարձվի, աշխատում է չտալ կամ պարզապես չի տալիս, առանց քաղաքավարական սեթևեթանքի: Եթե հարցնեք՝ իսկ ո՞ւմ է, ի՞նչ է շատ սիրում, կասե՛մ՝ կյանքը և գիրք: Կենսասեր և կենսախիմիո աճճնավորություն է Գ. Ջահուկյանը: Ունի իր սիրած ժողովրդական երգը: Դա «Այլ բլուզիդ մեռնեմ...» երգն է, որ մտերիմների միջավայրում ուրախ տրամադրության պահերին շահելության տարիների հուզմունքով, թող որ երբեմն, երգում է անվանի գիտնականը: Սրամիտ ու սրախոս, հաճելի զրուցակից է նա: Վարակիչ ծիծաղ ունի. ծիծաղում և ծիծաղեցնում է իր

ունկնդրին: Գիտելիքների պես անսպառ են նաև Գ. Ջահուկյանի պատմած անեկդոտների պաշարները: Համով պատմող է: Պատմում է ինքնամոտացությամբ և նույն անեկդոտը հարյուրերորդ անգամ պատմելուց հետո էլ այնպիսի հրճվածք է ապրում, որ բոլորովին չի շտապում մաքրել ուրախության առատ արցունքներով ողողված դեմքը: Եվ ովքե՞ր են նրա պատմած, երբեմն էլ հորինած անեկդոտների հերոսները: Դրանք հոգնած գիտնականին զվարճացնող դիմջ միամիտներ են, ճարպիկ հնարամիտներ և, առավելապես, ազատ վարքի տեր, հրապուրիչ կանայք:

Վերջացնելուց առաջ նաև ասե՛ք, որ իբրև գիտության մարդ՝ Գ. Ջահուկյանը հենու է այժմ շատ տարածված մասնագիտական ու թեմատիկ ամեն կարգի շահարկումներից: Նա փառքի հետևից վազելու կարիք չունի: Բայց, ցավոք, միշտ չէ, որ փառքը ինքը գալիս և գտնում է տիրոջը, էլ չենք ասում, որ գնալով շատանում են սուտ փառաբանվողները: ՀՆՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ջահուկյանը վաղուց պիտի զբաղեցրած լիներ Խորհրդրդային Միության ակադեմիայի ակադեմիկոսի իր աթոռը, որը, մեր կարծիքով, թափուր է և սպասում է տիրոջը:

1990 թ. ապրիլի մեկին կյանքի 70 տարին բոլորած գիտնականը, միշտ հեռու ցուցադրական կեցվածքից ու ամբիսային ժողովրդայնությունից, համեստորեն շարունակում է իր գիտական սխրանքը՝ ի բարօրություն հայագիտության լայն ու խոր անդաստանի: Եթե գիտության մեջ ընդհանրապես կա անսահմանություն, ապա Գևորգ Բեգլարի Ջահուկյանը հայ լեզվաբանության հավերժի փոքրաթիվ ուղեկիցներից է, թեև այսօր մեր կողքին, իր պարզ ու հասարակ «այլ բլուզի» մեջ:

Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԼԵՑԱԶՈՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների կենտրոնը [գիտական ղեկավար՝ ՀՆՍՀ ԳԱ ակադեմիկոս էգ. Բ. Աղաջան, վարիչ՝ բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Գ. Մաղոյան (1969—1985 թթ. նույն պաշտոնը վարել է դոց. էմ. Ա. Պիվազյանը)], որն ունի միջֆակուլտետային պարբերական լաբորատորիայի կարգավիճակ, կազմավորվել է 1969 թվականին, համալսարանի նախկին ռեկտոր, ակադ. Մ. Գ. Խոսիտյանի նախաձեռնությամբ: Լաբորատորիայի (այսուհետ՝ հայագիտական կենտրոն) կազմի մեջ մտնում են՝ ա) պատմաբանասիրական հետազոտությունների խումբը, բ) Հայաստանի տեղաձուլման քառաբանագրական խումբը, գ) ԽՍՀՄ ժողովրդների գրական կապերի քառեր [վարիչ՝ բանասիրական գիտությունների թեկնածու Ն. Ա. Գուշար (1969—1985 թթ. այդ պաշտոնն զբաղեցրել է դոց. Ղ. Վ. Այվազյանը)] և հայ-վրացական բանասիրության խումբը: 1970 թվականից հայագիտական կենտրոնի կազմի մեջ էր նաև հնագիտական հետազոտությունների արշավախումբը, որը 1986-ին միավորվեց պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնին:

Հայագիտական կենտրոնի նպատակն է համախմբել մայր բունի համակիտար ֆակուլտետների, համապատասխան ամբիոնների, հասարակագիտական տարբեր միավորների և առանձին գիտնականների գործունեությունը, իզ-